«ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԹԻ ՊՈԱԿ

KOMITAS MUSEUM-INSTITUTE
NON-COMMERCIAL STATE
ORGANIZATION
KMI NCSO

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի 2026 թ. փետրվարի 27-ի նիստի

ք. Երևան

փետրվարի 27, 2026թ.
Նախագահությամբ՝ Լ. Սահակյանի
Քարտուղարությամբ՝ Մ. Վարդանյանի

Համաձայն N66/25 հրամանով հաստատված գիտական խորհրդի կազմի՝ նախատեսված 15 անդամներից նիստին ներկա էին 10-ը.

1.	Լուսինե Սահակյան
2.	Աննա Սմբատյան
3.	ԿԳՄՄՆ ներկայացուցիչ
4.	Սյուզաննա Խոջամիրյան
5.	Գուրգեն Գասպարյան
6.	Ծովինար Մովսիսյան
7.	Դավիթ Ղազարյան
8.	Աննա Արևշատյան
9.	Անուշ Արզումանյան
10.	Մարիամ Վարդանյան

Նիստի օրակարգը՝

1. ԿԹԻ կարճաժամկետ գիտահետազոտական աշխատանքների քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:
2. ԿԹԻ երկարաժամկետ ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:
3. ԿԹԻ կրթական ծրագրերի քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:
4. ԿԹԻ փառատոնների և ցուցադրությունների քննարկում /զեկուցող՝ Լ. Սահակյան/:

Մինչ օրակարգի հարցերի քննարկմանն անցնելը, ԿԹԻ տնօրեն Լուսինե Սահակյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Օրակարգում ընդգրկված առաջին հարցի շրջանակում Լ. Սահակյանը ներկայացրեց ԿԹԻ-ի սպասվելիք կարճաժամկետ գիտահետազոտական աշխատանքները: Ներկայացվում է ստորև՝ կետերով.

1. Նախատեսվելիք հրատարակությունների շարքում առաջինը **«Հազար ու մի խաղ», հատոր Թ, Կատակերգեր** ժողովածուն է, որն անցնելով հրատարակչական փուլը, այլևս, պատրաստ է տպագրության:
2. **«Կոմիտասի դաշնամուրային պարեր»** (Հայկ Մելիքյանի կատարումների QR code-ով) ժողովածուն գտնվում է հրատարակչական փուլում, և մշակումից ու որոշակի փոփոխություններից հետո պատրաստ կլինի տպագրության:
3. Նախատեսվում է **«Կոմիտասի Ա հատոր»**-ի հրատարակումը, որն իրենից ներկայացնում է կոմիտասյան բնագրերի հիմքով Urtext հրատարակություն՝ նոր ծանոթագրություններով և խմբագրումներով: Կոմիտասյան բնագրային նյութերի վրա աշխատել և ծանոթագրություններ է կազմել Երվանդ Երկանյանը:
4. Հաջորդիվ նախատեսվում է Կոմիտասի կյանքի վերջին շրջանը (Վիլ-Ժուիֆ և Կ.Պոլիս) ներկայացնող **մենագրական աշխատության հրատարակություն**՝ Պոլսից և Փարիզից մասնագիտական խորհրդատուների ներգրավմամբ: Ուսումնասիրությունը լույս է տեսնելու «Կոմիտաս նամականի: Վիլ-Ժուիֆ» խորագրով: Տնօրեն Լ. Սահակյանը նշեց, որ թանգարանը փորձում է կապ հաստատել նաև Փարիզի Վիլ-Էվրար հոգեբուժարանում աշխատող մի կնոջ հետ՝ նոր տեղեկությունների ակնկալիքով:
5. Կոմիտասի թանգարան-ինստիտուտը նախատեսում է **Լուիզ Ֆով Հովհաննիսյանի հոգեվերլուծական ուսումնասիրության թարգմանությունն ու հրատարակությունը** հայերեն լեզվով: Այդ աշխատությունը անտիպ բժշկական դիսերտացիա է, որը ներկայացնում է Կոմիտասի՝ հոգեբուժարանում գտնվելու ընթացքն ու հիվանդության հոգեվերլուծությունը:
6. Նախատեսվում է նաև **Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական նստաշրջանի հոդվածների ժողովածուի** հրատարակություն, որը ներկայացնում է 2025թ.-ի «Կոմիտաս միջազգային գիտաժողով-փառատոն»-ի շրջանակներում նիստի մասնակիցների կողմից զեկուցված նյութերի տպագրություն հոդվածների տեսքով:
7. **Կոմիտասի թանգարան-ինստիտուտի էլեկտրոնային կայքի** ստեղծման շուրջ տնօրեն Լ. Սահակյանը հայտնեց կայքում ընդգրկելիք նյութերի մասին, որ շարադրվելու են եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն): Այդ ընդգրկելու է Կոմիտասի մասին կենսագրական տվյալներ, նյութեր կոմիտասյան ստեղծագործությունների մասին, տեղեկություններ թանգարանի և թանգարանի աշխատակիցների մասին:
8. **«Կոմիտասի» հուշամեդալի** ստեղծում "Forty Seven" ընկերության հետ համատեղ: Սա նախագիծ է, որը մեդալին կից ենթադրում է նաև պատկերազարդ գրքույկ: Սրանք հուշանվերներ են, որ հետապնդում են կոմերցիոն նպատակ:
9. Կոմիտասի թանգարան-ինստիտուտը նախատեսում է թողարկել **«Նկարահանելուկ» մանկական խաղ**՝ կոմիտասյան երգերի թեմաներով:
10. Կոմիտասի թանգարան-ինստիտուտի կողմից նախատեսվում է **Ռոբերտ Աթայանի արխիվի նամականի-մատենաշարի** հրատարակություն: Վերջինիս հետ կապված ներկա պահին ընթանում են ծանոթագրական աշխատանքներ: Նախատեսվում է առաջին փուլով դասակարգել Վարդան Սարգսյանին հասցեագրված նամակները:

Տնօրեն Լ. Սահակյանը նշեց, որ նամականիում ընդգրվելու են միայն կոմիտասագիտությանը առնչվող նամակները:

11. **Կոմիտասի մասին մենագրություն հրատարակություն** հայերեն և անգլերեն լեզուներով, ինչը ենթադրում է հանրամատչելի և համահավաք ժողովածու Վարդապետի կենսագրական փաստերի և ստեղծագործության վերլուծության ժամանակագրության հիմքով: Տնօրեն Լ. Սահակյանը նշեց, որ վերջերս Կոմիտասի թանգարան-ինստիտուտը թողարկել է հինգ լեզվով տեղեկատվական կատալոգներ՝ թանգարանի այցելուների համար:
12. Ներկայումս Կոմիտասի թանգարան-ինստիտուտը բանակցություններ է վարում **Գյոթե կենտրոնի հետ՝ համագործակցության հնարավորությունների շուրջ**: Տնօրեն Լ. Սահակյանը նշեց, որ Ռ. Աթայանի արխիվում հայտնաբերվել են գերմաներեն լեզվով անտիպ նյութեր, որոնք թարգմանելուց հետո նախատեսվում է վերջիններիս համատեղ երկլեզու հրատարակությունը՝ Գյոթե կենտրոնի միջնորդությամբ:
13. Կոմիտասի թանգարան-ինստիտուտի կողմից նախատեսվում է նաև **Կոմիտասագիտական շտեմարանի ստեղծում և թվայնացում**: Թանգարանի աշխատակից Ա. Արզումանյանը նշեց, որ աշխատանքը սկսել են Հայաստանի ազգային գրադարանի արխիվից, սակայն նախատեսում են ուսումնասիրություններ կատարել բոլոր այն մշակութային կառույցներում, որտեղ նյութեր կան Կոմիտասի մասին: Առայժմ ընթանում են նյութի հավաքագրման աշխատանքները: Նախատեսվում է հավաքագրված բոլոր նյութերը համակարգել և միավորել էլեկտրոնային շտեմարանում:

Նիստի մասնակիցների կողմից առաջարկվեց.

1. Քննարկման սկզբում ԿԳՄՄՆ ներկայացուցչի կողմից առաջարկվեց այսուհետ պատրաստի աշխատանքները դասակարգել երկու խմբով՝ հրատարակչական և տպագրական: Հրատարակչական է այն աշխատանքը, երբ վերջինս գտնվում է պատրաստման, մշակման և ուսումնասիրության փուլում, իսկ տպագրական, երբ նյութի վրա աշխատանքն ավարտված է և պատրաստ տպագրության:
2. «Կոմիտասի Ա հատոր» աշխատության հետ կապված նիստի մասնակիցների կողմից առաջարկվեց տրված անվանումը ձևակերպել «Կոմիտասի Վարդապետ: Մեներգեր»: Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց աշխատության խորագրին կից նշել «բնագրերի հրատարակում» հավելումը:
3. Կոմիտասի կյանքի վերջին շրջանը (Վիլ-Ժուիֆ և Կ.Պոլիս) ներկայացնող մենագրական աշխատության հրատարակություն հետ կապված Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց բացի թանգարանի տրամադրության տակ եղած նյութերից օգտվել նաև Եղիշե Չարենցի անվան ԳԱԹ-ի Վահրամ Թորգոմյանի ֆոնդից:
4. Կոմիտասի թանգարան-ինստիտուտի էլեկտրոնային կայքի ստեղծման վերաբերյալ Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց էլ. կայքում ընդգրկել նաև թվային շտեմարան և թվային գրադարան: Տնօրեն Լ. Սահակյանը ի պատասխան նշեց, որ թանգարանը դեռ չունի թվային գրադարան և որ մոտալուտ պլաններում դիտարկելու ենք նաև թվայնացված գրադարանի ստեղծումը: Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց նաև

էլեկտրոնային կայքում ներկայացնել թանգարանի առօրյան և սպասվելիք նորությունները:

5. «Կոմիտասի հուշամեդալ»-ի հետ կապված նիստի անդամների կողմից առաջարկվեց հուշամեդալային կրկնողությունից խուսափելու նպատակով սույն հուշամեդալը անվանել «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ»-ի հուշամեդալ:
6. Ռոբերտ Աթայանի արխիվի նամականի-մատենաշարի հրատարակության հետ կապված Գ. Գասպարյանի կողմից առաջարկվեց Աթայանի նամակները դասակարգել ժամանակագրական կարգով և հրատարակել այդ տեսքով:
7. Կոմիտասագիտական շտեմարանի ստեղծում և թվայնացման հետ կապված ԿԳՄՄՆ աշխատակցի և Ս. Խոջամիրյանի կողմից առաջարկվեց էլեկտոնային շտեմարանում զետեղել միայն տվյալ թանգարանային նմուշին վերաբերող ոչ տպագրական ֆորմատի լուսանկար և անոտացիա՝ տալով հղումներ առ այն, թե որտեղ կան տեղեկություններ սույն նմուշի վերաբերյալ:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի առաջին կետով առաջադրված ԿԹԻ կարճաժամկետ գիտահետազոտական աշխատանքներին:</u>

Օրակարգում ընդգրկված երկրորդ հարցի շրջանակում Լ. Սահակյանը ներկայացրեց ԿԹԻ-ի սպասվելիք երկարաժամկետ ծրագրերը: Ներկայացվում է ստորև՝ կետերով.

1. Արխիվային նյութերի փաստաթղթավորում և թվայնացում:
2. Մամուլում Կոմիտասին առնչվող տեղեկությունների հավաքագրում. «Լրաբեր հասարակական գիտությունների», «Էջմիածին», «Պատմա–բանասիրական հանդես», «Բանբեր Երևանի համալսարանի», «Բանբեր Մատենադարանի» պարբերականներում Կոմիտասին առնչվող նյութերի հավաքագրում:
3. «Կոմիտասի՝ Էջմիածնի երգչախմբի սաներից մեկի արխիվի ուսումնասիրություն
4. Հայաստանի Հանրային ռադիոյում Ռ. Աթայանի արխիվի ուսումնասիրություն
5. Գրքերի վերականգնում Մատենադարանի կողմից: Խոսքը վերաբերում է Շարակնոցին և Ավետարանին:
6. Ռ.Աթայանի ընտանեկան արխիվի նյութերի ուսումնասիրություն:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի երկրորդ կետով առաջադրված ԿԹԻ երկարաժամկետ գիտահետազոտական աշխատանքներին:</u>

Օրակարգում ընդգրկված երրորդ հարցին ընդառաջ Լ. Սահակյանն անդրադարձավ ԿԹԻ-ի մշտական և ժամանակավոր ցուցադրություններին: Ներկայացվում է ստորև՝ կետերով.

1. **Կոմիտասի ձայնադարանը**: Սա նախկինում եղած ցուցադրության արդիականացումն է:
2. **Կոմիտասյան հոլոգրաֆիկ պատկերի ցուցադրություն**:

3. **Տարազիր իրեր**: Սա ժամանակավոր ցուցադրություն է, որն իրականացվելու է Ցեղասպանության թանգարանի և ԳԱԹ-ի հետ համատեղ:
4. **Նկարիչների ցուցադրություն**: Սա ժամանակավոր ցուցադրություն է, որ կրում է «Երկխոսություն Կոմիտասի հետ» խորագիրը: Ներկայացվելու են արտասահմանից ժամանած նկարիչների կտավներ, որոնց թեմատիկան կապված է Կոմիտասի և կոմիտասյան ստեղծագործությունների հետ:

ՈՐՈՇՈՒՄ

<u>Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի երրորդ կետով առաջադրված ԿԹԻ նախատեսվելիք ցուցադրություններին:</u>

Օրակարգում առաջադրված չորրորդ հարցի շրջանակում Լ. Սահակյանն անդրադարձավ ԿԹԻ-ի կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներին: Որպես մոտալուտ ծրագրեր ներկայացվում են Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված միջոցառումները.

1. Նամակներ Վիլժուիֆից ժամանակավոր ցուցադրություն՝ նվիրված Կոմիտաս Վարդապետի կյանքի վերջին շրջանին:
2. Շրջայց Կոմիտասի թանգարան-ինստիտուտի նամակներ Վիլժուիֆից ժամանակավոր ցուցադրության սրահով: Բանախոս՝ Լիլիթ Հարությունյան:
3. «Հայկական հետքը ֆրանսիական մշակույթում» (ԿԹԻ գրադարանում): Բանախոս՝ Դանիել Երաժիշտ:
4. Փարիզաբնակ կոմպոզիտոր Միշել Պետրոսյանի բանախոսությունը:
5. Ստ. Զորյանի անվան դպրոցի սաները Կոմիտասի թանգարան-ինստիտուտում (կրթական ծրագիր) մասնակցությամբ Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանի:
6. «Փարիզյան լռության նոկդյուրն»: Բանախոս՝ Անի Մուշեղյան և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողական համերգ:
7. «Երվանդ Քոչարը Ֆրանսիայում»: Բանախոս՝ Սահակ Գալոյան և Արմավիրի Արվեստի Պետական քոլեջի սաների համերգ:
8. «Հայագիտության ֆրանսիական հետքը. Հրաչյա Աճարյան»: Բանախոս՝ Մարիաննա Տիգրանյան և ԿԹԻ «Գեղարդ» երգեցիկ խմբի համերգ:
9. «Կոմիտաս Վարդապետի դաշնամուրային պարերի փարիզյան հրատարակության շուրջ»: Բանախոս՝ Լուսինե Սահակյան և Հրաչուհի Ռափյանի համերգ (դաշնամուր):

Ստորև՝ երկարաժամկետ միջոցառումների ցանկը.

1. Գրքի տոնին նվիրված միջոցառում:
2. Թանգարանային գիշեր՝ դասախոսություն և համերգ:
3. Թանգարանների միջազգային օր:
4. Եվրոպական օրերին նվիրված միջոցառումներ:
5. Միջոցառումներ Կոմիտաս գիտաժողով-փառատոնի շրջանակներում՝ օրվա խորհրդին համապատասխան:

ՈՐՈՇՈՒՄ

Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի չորրորդ կետով առաջադրված ԿԹԻ-ի կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներին:

Օրակարգում առաջադրված հինգերորդ հարցի շրջանակում Լ. Սահակյանն անդրադարձավ ԿԹԻ-ի կրթական ծրագրերին: Մշտական կրթական ծրագրերի կողքին ներկայացվեցին նաև նոր ծրագրեր: Հուլիս ամսին նախատեսվում է անցկացնել ամենամյա Կոմիտասական ամառային դպրոցը: Ընթացիկ ծրագրերը՝ ստորև.

1. «Կոմիտասն արվեստի գործերում»
2. «Հայոց գույնը՝ մեղեդի. Սարյան և Կոմիտաս»
3. «Հազար ու մի երգ» (երգի ուսուցում)
4. «Փո, է, վե» (հայկական նոտագրություն)
5. «Նկարում ենք երաժշտություն»
6. «Կենթո 150»
7. «Զար, զընգը, թող զընգա»
8. «Նանի, բալա, նանի»
9. «Կոմիտասի աշխատասենյակը VR շրջայց»
10. «Երկրի-երկնի կամարները էպոսի»
11. «Հանելուկածառ»
12. «Բեյբի կոնցերտ»: Սա նախկինում եղած կրթական ծրագրի արդիականացումն է:
13. «Կոմիտասի երգչախմբի հետքերով»: Սա նոր ծրագիր է, որը ենթադրում է ոչ պրոֆեսիոնալ երաժիշտներց կազմված երգեցիկ խմբի կազմավորում:
14. «Երգենք, պարենք»: Սա ևս նոր ծրագիր է, որի ենթադրում է կոմիտասյան երգերի ուսուցում:

ՈՐՈՇՈՒՄ

Գիտական խորհրդի կազմը միաձայն որոշեց հավանություն տալ օրակարգի հինգերորդ կետով առաջադրված ԿԹԻ-ի մշտական և նոր կրթական ծրագրերին:

ԿԹԻ գիտական խորհրդի՝

Նախագահ՝ _____ Լ. Սահակյան

Քարտուղար՝ _____ Մ. Վարդանյան